

Արձանագրություն հ.2

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի

13.02. 19 թ. կայացած նիստի

Նիստին մասնակցում էին ֆակուլտետի գիտական խորհրդի 36 անդամներից 29-ը:

Օրակարգում՝

1. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և գիտական ղեկավարների հաստատում:
2. Ֆակուլտետի ամբիոնների ուսումնական պլաններում և ծրագրերում փոփոխություններ կատարելու մասին հարցը (զեկուցող՝ ամբիոնների վարիչներ և ծրագրերի ղեկավարներ):
3. ԵՊՀ-ի իրավիճակի մասին :
4. Ընթացիկ հարցեր:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ զեկուցեցին ամբիոնների վարիչները, ովքեր գիտական խորհրդի հաստատմանը ներկայացրեցին իրենց ամբիոնների նոր ընդունված հեռակա ասպիրանտների ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների մասին առաջարկություններ:

Որոշեցին հաշվի առնելով, ամբիոնների որոշումները և գիտխորհրդի նիստի ընթացքում հնչած կարծիքները, որոշ ճշգրտումներից հետո հաստատել ամբիոնների որոշումները (ասպիրանտների թեմաների և գիտական ղեկավարների հաստատման վերաբերյալ քաղվածքներն ուղարկվում են ասպիրանտուրայի բաժին)

Օրակարգի 2-րդ հարցի շրջանակում որոշեցին հաստատել ամբիոնների կողմից արված նկատառումները:

Օրակարգի 3-դ հարցի վերաբերյալ՝

Արտահայտվեցին ֆակուլտետի ղեկան, տ.գ.դ., պրոֆեսոր Հ.Սարգսյանը, ՀՀ ԳԱԱ

թղթակից անդամ Գ. Ղարիբյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Ա.Մարկոսյանը, տ.գ.դ. պրոֆեսոր Ա.Առաքելյանը, տ.գ.դ. պրոֆեսոր Մ.Միքայելյանը, տ.գ.թ. Ա Մինասյանը, տ.գ.թ. Գ .Բարխուդարյանը, ֆիզ մաթ.գ.թ., դոցենտ Ա.Կարապետյանը, ֆակուլտետի ուս. խորհրդի նախագահ Մ.Մանասյանը: Նրանք բոլորն էլ մտահոգություն հայտնեցին ԵՊՀ-ում ստեղծված իրավիճակի վերաբերյալ:

Որոշեցին հիմք ընդունելով 2019թ. մարտի 4-ին կայացած ԵՊՀ ռեկտորատի <<Համալսարանում ստեղծված իրավիճակի քննարկում, խնդիրների վերհանում և առաջարկությունների ձևակերպում ֆակուլտետային գիտական խորհուրդների նիստերում>> որոշումը, արձանագրել, որ ստեղծված իրավիճակը վնասում է տարիների ընթացքում ԵՊՀ ձեռք բերած վարկանիշին, որի բարձրացումը առավել հետևողական ջանքեր է պահանջելու: Ակնհայտ է, որ խնդիրը առաջնահերթ ազդեցություն կարող է ունենալ դիմորդների թվաքանակի վրա, ինչն էլ առաջիկա տարիներին կարող է հանգեցնել ֆինանսական խնդիրների:

Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի կարծիքով ԵՊՀ-ում առաջնային ուշադրության են արժանի հետևյալ խնդիրները.

1. **Կրթության որակի շարունակական բարելավում:** Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել բարելավելու կրթական ենթակառուցվածքները և արդիականացնելու կրթական տեխնոլոգիաները: Մասնավորապես՝ անհրաժեշտ է կիրառել ուսանողների դասընթացներին մասնակցության վերահսկման և գնահատման գործունե կառուցակարգեր: Ինչպես նաև կարևոր է շարունակաբար բարելավել որակյալ կրթության ապահովման լսարանային և արտալսարանային պայմանները:
2. **Ֆակուլտետների ինքնավարության բարձրացում:** Տարիների ընթացքում տարբեր կանոնակարգերի միջոցով աստիճանաբար նվազել է ֆակուլտետի՝ որպես գիտաուսումնական կարևորագույն օղակի ինքնավարության աստիճանը: Խիստ համակենտրոնացման, արհեստածին վերահսկողական մեխանիզմների գործադրմամբ

ստեղծվում է անվստահության մթնոլորտ, ինչը բացասաբար է անդրադառնում ուսումնական գործընթացի արդյունավետության վրա: Կարևորվում է նաև ֆինանսական հոսքերի օպտիմալ կառավարումը ըստ ֆակուլտետի կողմից գեներացված առակա և հեռակա միջոցների համամասնությունների չափանիշի:

- 3. Աշխատակիցների սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում:** Աշխատանքի վարձատրության դրույքաչափերը չեն կարող մոտիվացնել պրոֆեսորադասախոսական կազմին և նպաստել նրանց մասնագիտական որակավորման բարձրացմանը: Կարևոր է աստիճանաբար քայլեր ձեռնարկել նշված խնդրի լուծման ուղղությամբ: Մասնավորապես ապահովագրության հետագա ընդլայնումը հնարավորություն կտա որոշակիորեն մեղմել նշված խնդիրը: Առկա սոցիալական խնդիրների հաղթահարման համար կարևոր է նաև ֆինանսական հոսքերի կառավարման համակարգի կատարելագործումը:

Գիտիարհիդի նախագահ,
ու. գ. ղ., պրոֆեսոր

Գիտիարհիդի քարտուղար,
ու. գ. թ., պրոֆեսոր



Հ.Լ. Սարգսյան

Ա. Հ. Համբարձումյան